ԿՐՈՆԱԿԱՆ

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԻՆ

(16 օգոստոսի, կիրակի, 1998 թ.)

«Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին. երանելի առաքեալքն և սուրբ կուսանքն. ջահազգեստուք պայծառացեալք լուցանեին զլապտերս իւրեանց. և միածայնեալ ասէին. օրհնեալ ես ամէնօրհնեալդ ի կանայս»

(ՇԱՐԱԿԱՆ)

Այսօր ժողովված էին սրբերը միասին, երանելի առաքյալները և սուրբ կույսերը, ջահազգեստուք պայծառացած, վառում էին իրենց լապտերները և ասում միասին. «օրհնեալ լինի նա, որ Տիրոջ անունով է գալիս» (Մարկ. ԺԱ 9):

Այսօր Ս. Աստվածածնի վերափոխումն է՝ Հայաստանյայց եկեղեցու հինգ տաղավարներից չորրորդը՝ նվիրված Ս. Աստվածածնին: Այսօր Ս. Աստվածածնի պաշտամունքով նաև պիտի օրհնվի Հայաստան աշխարհի դաշտերում ծլած և ծաղկած խաղողն ու որթատունկը:

Ո՞վ էր Ս. Աստվածածինը: Նա Հովակիմին և Աննային խոստացված զավակն էր: Նրանք երկար ժամանակ զավակ չունեին և խոստացան ունենալու դեպքում նվիրել տաճարին: Այդպես էլ եղավ. Աննան իր առաջացած տարիքին ունեցավ Մարիամին և երեք տարեկանում նվիրեց Սողոմոնի տաճարին: Այնտեղ հավաքված ուխտի զավակները և կանայք տաճարի մաքրությունն էին անում և ամեն առավոտ ու երեկո մասնակցում պաշտամունքներին: Յոթ տարեկան հասակում Մարիամը տուն գնաց, որպեսզի իր ուխտի արդյունքը տեսնի, ապա վերադարձավ տաճար ու ծառայեց մինչև տասչորս տարեկանը: Նրա նշանածը՝ Հովսեփը, ատաղձագործ էր: Հիսուսի ծննդյան պատմության մեջ տեսնում ենք, որ երբ Հովսեփը և իր նշանած Մարիամը Բեթլեհեմ էին գնում, Հովսեփը նկատեց, որ իր կինը հղի է: Որպեսզի նրա մտքի կասկածը վերանա, Աստծո հրեշտակը գիշերով մոտեցավ նրան և հայտնեց. «Հովսեփ, Դավթի՝ որդի, մի՝ վախեցիր քեզ մոտ առնելու Մարիամին՝ քո կնոջը, որովհետև նրա մեջ ծնվածը Սուրբ Հոգուց է: Նա մի որդի պիտի ծնի, և նրա անունը Հիսուս պիտի դնես, քանի որ նա պիտի փրկի իր ժողովրդին՝ իր մեղքերից» (Մատթ. Ա 20-21):

Այո՛, աստվածային երևույթներին մարդկային միտքը և մարդկային չափանիշները չեն կարող հասու լինել, այդ իսկ պատճառով այն, ինչ չենք կարող մեր մտքով հասկանալ, հավատքի միջոցով պետք է ընկալել:

Հիսուս ծնվում է Բեթլեհեմում: Բեթլեհեմում, որովհետև Հիսուս Դավթի ցեղից պետք է լիներ, և Դավթի ցեղից եղող բոլոր քաղաքացիները Բեթլեհեմում էին արձանագրվում: Ապա տեսնում ենք, թե Հիսուսի ծննդից հետո Աստվածամայրը, իբրև իր Որդու դաստիարակ, երեսուն տարի Հովսեփի հետ խնամում է Նրան: Երեսուն տարին լրանալուն պես Հիսուս գնում է անապատ մի տեղ քառասուն օր ճգնելու և իր քարոզությունը սկսելու համար՝ ըստ հրեական ռաբբիների ու քահանաների սովորության: Քառասուն օրերը լրանալուց հետո առաջին անգամ Հիսուսին, նրա մորը՝ Մարիամին, տեսնում ենք Կանայի հարսանիքում: Եվ երբ գինին պակասեց, Մարիամը մոտեցավ որդուն և ասաց. «Գինի չունեն» (Հովհ. Բ 3): Հիսուս պատասխանեց. «Իմ ժամանակը դեռ չի հասել» (Հովհ. Բ 4): Սակայն Նա կատարեց իր մոր կամքը ու վեց թակույկներում հավաքած ջուրը հրաշքով գինու վերածեց: Եվ երբ սեղանապետին գինին մատուցեցին, նա ասաց. «Ամեն մարդ նախ ընտիր գինին է մատուցում, և երբ հարբած են, այն ժամանակ՝ վատը, իսկ դու ընտիր գինին մինչև հիմա պահել ես» (Հովհ. Բ 10):

Հետո Աստվածամորը տեսնում ենք Կափառնայումում Հիսուսին փնտրելիս (Մարկ. Գ 32): Ապա Աստվածամորը հանդիպում ենք Հիսուսի խաչելության պահին Գողգոթայի ստորոտին, երբ Հիսուս իր հոգին էր ավանդում, Հովհաննեսին ասաց. «Ահա քո մայրը» (Հովհ. Ժ Թ 27): Այսինքն ուզեց ասել՝ քո մոր պես նայիր իմ մորը: «Գործք Առաքելոցում» գրված է, թե Տիրամայրը լինում էր Հիսուսի աշակերտների հետ, երբ հավաքվում էին վերնատանը, միասին աղոթում, փառաբանում և սպասում խոստացված Ս. Հոգու գալստյանը: Պենտեկոստեի օրը Աստվածամայրը նստած էր աշակերտների հետ, և Ս. Հոգին հրեղեն լեզուների տեսքով հանգչեց թե՛ աշակերտների և թե՛ Մարիամի վրա: Պատմությունը ասում է, որ նա Հիսուսի խաչելությունից հետո 14-15 տարիներ ևս եղավ առաքյալների հետ՝ լինելով ասես նրանց մխիթարիչ մայրը: Աշակերտները պաշտեցին, հարգեցին նրան:

Երբ ժամանակը հասավ, Աստվածամայրը փակեց իր աչքերը՝ ննջեց: Չենք ասում, թե մահացավ, քանզի իր Որդին խոստացել էր մարմնով փոխադրել նրան երկինք: Առաքյալները հավաքվեցին և Գեթսեմանիի ձորակում գերեզմանի մեջ դրեցին: Երեք օր շարունակ լսվում էին հրեշտակների երգասացության ձայներ գերեզմանի շուրջ: Երեք օր անց երբ Բարդուղիմեոս՝ Հայաստանի առաքյալը, վերադարձավ Երուսաղեմ, ցանկացավ Աստվածամոր մարմինը տեսնել և իր հարգանքի տուրքը մատուցել: Ընդառաջելով նրա ցանկությանը, Հիսուսի առաքյալներն ու որոշ աշակերտներ գերեզման գնացին, քարը շրջեցին և տեսան միայն Աստվածամոր պատանքը: Տիրամայրը ըստ աստվածային խոստման արդեն երկինք էր բարձրացվել, փոխադրվել: Նա մեռած չէր, այլ ննջում էր և երկինք փոխադրվեց:

Այս սրբազան իրողությունն է, որ մենք դարեդար, ամեն տարի տոնախմբում ենք Աստվածամոր երկինք փոխադրության փառավոր հիշատակը՝ դրանով իսկ վերացնելով մահվան հանդեպ մեր ունեցած կասկածը: Այլևս մենք մահը չենք ընդունում իբրև կյանքի վերջակետ: Մահը քրիստոնյաներիս համար ննջում է, քանզի Աստվածորդին երկրորդ անգամ երկնքից պիտի գա, մեռածներին կյանք պիտի պարգևի: Դատաստան պիտի լինի, և քրիստոնյաները, որ աջ կողմում են կանգնելու, երկինք պիտի սլանան

փառքով ու պատվով՝ Հիսուսի կողքին փառավորապես ներկա լինելու համար: Ժամանակ այլևս գոյություն պիտի չունենա, հավիտենականությունը պիտի տիրի, մարդիկ պիտի լինեն հոգեղեն էակներ Աստծո էությանը միասին խառնված, Նրա ներկայությունը վայելող, Նրա հետ ապրող:

Այսօր մենք օրհնում ենք Հայաստանի որթատունկերը և նրա բերքը՝ խաղողը, որը խորհրդանշում է Հիսուսի թափած արյունը Գողգոթայի բարձունքի վրա: «Ես եմ ճշմարիտ որթատունկը, և Իմ Հայրը մշակն է» (Հովհ. ԺԵ 1): Վերջին ընթրիքի պահին, վերնատան մեջ գինին տալով աշակերտներին, Հիսուս ասաց. «Այս է նոր ուխտի Իմ արյունը» (Մարկ. ԺԴ 24):

Հիսուս խաղողի հյութը օրհնեց, որպեսզի յուրաքանչյուր անգամ այս սուրբ խորանների վրա պատարագ մատուցելով ըմպենք այդ սուրբ արյունը խաղողի խորհրդանշական հյութի՝ գինու միջոցով՝ այդպիսով քավելով մեր մեղքերը, այդպիսով փառավորելով մեր կյանքը, որպեսզի սրբվենք մեղքերից ու մաքրված, սրբացած ներկայանանք Աստծուն: Այս խաղողները, որ բերված են այստեղ, օրհնությունից հետո պիտի բաշխվեն ձեզ: Օրհնում ենք, որպեսզի քամիները, շոգը չփչացնեն այն, այլ բերքը լինի առատ ու անսպառ:

Այսօր, սիրելի հավատացյալներ, Ս. Աստվածածնի տոնն ընդունենք որպես մայրերի, քույրերի, դուստրերի տոն, հարգենք և պատվենք նրանց: Դուք, սիրելի կանայք, աշխարհի ճոխությունից մի շլացեք, անբարոյականության հետևից մի գնացեք, դրամը մի սիրեք, այլ սիրեցեք ձեր ընտանիքները, լավ դաստիարակեք ձեր զավակներին: Ընտանիքը թող լինի ձեր ամենամեծ հարստությունը աշխարհի վրա: Մի ընդունեք Արևմուտքի բարքերը, ուր կա դրամ, սակայն բացակայում է ընտանեկան սերն ու հաշտությունը, ուր տիրում է հաճույքը, դրամը, ցոփությունը:

Շուտով պիտի տոնենք Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակը: Արդյո՞ք պատրաստ ենք: Արդյո՞ք մեզանից յուրաքանչյուրը պատրաստ է կոչվելու քրիստոնյա, արդյո՞ք մեր կյանքը Քրիստոսի խաչին նվիրված կյանք է, թե անհոգ, աննպատակ, անիդեալ մի կյանք՝ օրվա պատահարներով, օրվա մտահոգություններով խառնված, թե մեր կյանքը կյանք է խաչի:

Լուսավոր կերպով տեսնենք Հայոց ապագան Գողգոթայի բարձունքին խաչի վրա բևեռված՝ լուսեղեն կերպարանքով, ուր ոչ թե պարտությունն է հաղթելու, այլ հաղթանակն է վերջիվերջո տիրելու ողջ աշխարհին:

Շնորհավորում եմ ձեզ, կանայք, Ս. Աստվածածնի տոնի առթիվ և նաև ձեզ, սիրելի եղբայրներ, ձեր կանանց տերը եղեք և լավ խորհուրդներով առաջնորդեցեք, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն: